

Պայծառ շողալույ Չեխիայի Հանրապետությունում

Կազմել է Շարուն Գողորիչը, Եկեղեցու ամսագրեր

Մենք Երեխաների Խմբից ենք՝
Չեխիայի Հանրապետությունից:
Ահա, թե ինչպես ենք մենք
պայծառ շողում մեր երկրում:

Լողափին երկինքը սկսեց խավարել:
Քամին փչում էր և հսկա ալիքներ
առաջացնում: Ամպրոպ տեղաց՝ կայծակով
ու կարկուտով: Բոլորը՝ վազելով մտան
ծածկի տակ: Մենք չվնասվեցինք
փոթորկից: Տան ճանապարհին մենք
տեսանք երեք ծիածան: Մենք գիտենք, որ
Աստված օգնեց և պաշտպանեց մեզ:
Ջակոբ Բ., 10 տարեկան



ՄԱՐԿԱԿ

Մի անգամ ես կորցրի իմ սիրած ձեռնոցը: Ես շատ տխուր
էի: Ես և մայրս աղոթեցինք, բայց չգտանք այն: Ես փորձեցի
հավատ գործադրել: Մի շաբաթ անց իմ փոքր եղբայրը
փողոցում գտավ իմ ձեռնոցը: Աստված պատասխանում է մեր
աղոթքներին: Ես սիրում եմ Նրան և գիտեմ, որ Նա ապրում է:
Անդրե Վ., 9 տարեկան



Դպրոցում ես մի ընկեր ունեմ, ում հետ
ոչ ոք չի ցանկանում ընկերություն անել:
Ուրիշ երեխաները սկսեցին վատ բաներ
ասել նրա մասին, ինչը ստիպեց նրան
իրեն տգեղ
համարել: Ես
պատմեցի իմ
ուսուցչին և
հրավիրեցի նրան
խաղալ ինձ հետ:
Իմ ընկերը շատ
ուրախացավ:
**Լյուդմիլա Վ.,
8 տարեկան**



Ես բարկացած էի մայրիկիս վրա,
քանի որ չէի ցանկանում լողանալ
ու պառկել քնելու: Հաջորդ օրը
ես տխուր էի իմ ընտրության
հետևանքով: Մայրիկն ասաց,
որ մենք կարող ենք աղոթել
և Երկնային Հորից խնդրել
ներել մեզ: Մենք ծնկի իջանք և
աղոթեցինք: Ես ավելի լավ զգացի:
Ես իմացա, որ մենք կարող ենք
ապաշխարել ու ներվել Հիսուս
Քրիստոսի շնորհիվ:
Սենյուն Զ., 5 տարեկան

Ես դպրոցում ունեմ ընկերներ, ովքեր
Եկեղեցու անդամներ չեն, բայց հարգում են իմ
չափանիշները: Մի անգամ ես ասացի, որ մենք
պետք է աղոթենք, և նրանք համաձայնվեցին:
Ես շատ երջանիկ էի:
Իվանա Ա., 11 տարեկան



Ես իմ վկայությունը
բերեցի Եկեղեցում:
Ես քաջալերվեցի: Այդ
ժամանակից սկսած ես
զգացել եմ Հոգին:
Էլիսկա Կ., 11 տարեկան



Ես և ընկերներս իջնում
էինք ներքև: Երբ
հասանք վերելակին,
ես անհանգստության
զգացում ունեցա և խնդրեցի
ընկերներիս չօգտվել դրանից:
Այնուամենայնիվ, նրանք
որոշեցին իրենց ասածով անել:
Ես իջա աստիճաններով:



Երբ իջա ներքև, ընկերներս
այնտեղ չէին: Վերելակը կանգ
էր առել: Որոշ ժամանակ
պահանջվեց, մինչև նրանք
դուրս կգային: Ես երջանիկ էի,
որ ոչ մի լուրջ բան չպատահեց:
Ես նաև լավ զգացի, որ հետևել
էի Սուրբ Հոգուն:
Ամալի Ն., 10 տարեկան

Երբ իմ ծովախոզուկը
հիվանդացավ, ես աղոթեցի նրա
համար: Ես երախտապարտ եմ
Երկնային Հորը մեզ օգնելու համար:
Անետա Պ., 10 տարեկան



ՈՒՂԱՐԿԵՔ ՄԵՋ ԱՍՏՂ



Մենք համարյա
ավարտեցինք
աստղեր հավաքելը:
Եթե դուք դեռ չեք ուղարկել,
շտապեք և փոստով մեզ ուղարկեք ձեր
աստղի լուսանկարը ձեր պատմության
հետ միասին, լուսանկար և ծնողների
թույլտվությունը liachona@ldschurch.org: